## Չի կարելի...

- հավաք կատարել անտառում կամ այլ տարածքում, եթե առկա է կարևոր նշանակություն ունեցող բույսերի հավաքակազմ, որն ունի գենետիկական, գիտական կամ պատմամշակութային նշանակություն

- հավաք կատարել մայրուղիների, ճանապարհների եզրերից, այն տարածքներից, որտեղ իրականացվում են սրսկումներ թունաքիմիկատներով, արդյունաբերական գործարանների հարակից և այլ աղտոտված տարածքներում

- անհրաժեշտ է հստակ իմանալ, թե տվյալ բույսի որ մասերը պետք է հավաքվեն, հավաքը պետք է կատարել զգուշորեն, չի կարելի ջարդել, վնասել ամբողջ բույսը կամ բույսի մնացած մասերը

- արգելվում է իրականացնել Կարմիր գրքում գրանցված կամ այլ ձևով վտանգված բուսատեսակների հավաք

- չի կարելի կատարել որևէ բուսատեսակի գերհավաք՝ այսինքն նույն տարածքից ամեն տարի հավաքել նույն բույսը մեծ քանակով, որի պատճառով բուսատեսակը չի կարողանա վերականգնվել

- չի կարելի հավաքման ընթացքում կենցաղային թափոններով աղտոտել շրջակա միջավայրը

- ցանկալի չէ հավաքը կատարել անձրևոտ կամ խոնավ եղանակին

Սույն հրատարակությունը հնարավոր է դարձել իրականացնել Հայաստանում Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի Փոքր Դրամաշնորհների Ծրագրի աջակցությամբ <Հողային ռեսուրսների կայուն օգտագործմանն ու կենսաբազմազանության պահպանությանն ուղղված փորձի ներդրում Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքում> նախագծի շրջանակներում:









# Վայրի հավաք



# Օրգանական գյուղատնտեսության պահանջները վայրի հավաքի վերաբերյալ

Չնայած մշակովի բույսերի բազմազանությանը, մարդը շարունակում է օգտվել բնության բարիքներից, այդ թվում նաև զբաղվելով վայրի հավաքով: Վայրի ուտելի հատապտուղները, պտուղները, խոտաբույսերը և սնկերը, ինչպես նաև դեղաբույսերը մեծ նշանակություն ունեն սննդի, դեղորայքի, կոսմետիկայի և օծանելիքի արտադրության մեջ: Վայրի հատապտուղները օգտագործվում են հյութերի, մուրաբաների, թեյերի, պաղպաղակների, յոգուրտների, հրուշակեղենի արտադրության մեջ, ինչպես նաև հատապտուղների կորիզներից ստացվում է յուղ: Հատապտուղներն օգտագործվում են նաև բուժիչ հատկությունների համար:

ՀՀ-ում վայրի հավաքով զբաղվում են տարբեր տարածաշրջաններում: Վերջին տարիներին ՀՀ-ում ավելացել է վերամշակող ձեռնարկությունների թիվը, որոնք արտադրության համար որպես հումք մթերում են վայրի հատապտուղներ: Վայրի հավաքը դարձել է հավելյալ եկամտի աղբյուր շատ ընտանիքների համար, որի հետևանքով հավաքի ծավալները տարեց-տարի ավելանում են:

Վայրի հավաք, իհարկե, կարելի է կատարել, սակայն այն պետք է կատարվի խելամիտ՝ նվազագույնի հասցնելով բնությանը պատճառած վնասը: Սխալ կատարվող վայրի հավաքը կարող է լուրջ վնասներ հասցնել բնությանը և խախտել տեսակային հավասարակշռությունը: Որևէ բուսատեսակի գերհավաքը կարող է պատճառ հանդիսանալ նրա թվաքանակի նվազման համար, իսկ երբեմն կանգնեցնել վերացման վտանգի տակ: Այսպիսի փոփոխությունները բնության մեջ ունենում են իրենց բացասական հետևանքները:

Հավաք կատարողները պետք է տեղեկացված լինեն վայրի հավաքի կատարման ճիշտ տեխնիկային և պահանջներին:

- հավաքը պետք է կատարել նախօրոք որոշված տարածքից
- հավաք կատարել այն տարածքներից, որտեղ առնվազն երեք տարի չի մշակվել արգելված նյութերով
- հավաքը չպետք է վնասի բնական ռեսուրսների կենսակայունությանը կամ տեսակային բազմազանությանը
- վայրի հավաքի թույլտվություն պետք է ստացվի համապատասխան իրավասու մարմիններից, ինչպես նաև հավաքի մանրամասն կանոնները բոլոր տեսակների համար
- պատասխանատու կազմակերպությունը կամ անհատը պետք է ներկայացնի օրգանական կառավարման պլանը
- վայրի հավաքը պետք է իրականացվի չաղտոտված տարածքներում և մաքուր վայրերում
- հավաքը չպետք է ոչնչացնի կամ վտանգի այլ կենդանի օրգանիզմների բնակեցման վայրերը կամ սնունդը
- հավաքել կարելի է միայն այն բույսերը կամ պտուղները, որոնք լավ հայտնի են հավաք կատարողին (անհրաժեշտության դեպքում կարելի օգտվել հատուկ ուղեցույցներից կամ գրքերից)
- բույսերին պատճառված վնասը պետք է հասցնել նվազագույնի
- հավաք կատարողները պետք է լավ պատրաստված և իրահանգավորված լինեն հավաքի տեխնիկայի և թույլատրելի քանակների մասին
- բերքահավաքի ընթացքում և բերքահավաքից հետո հավաքված հումքը պետք է պահվի ստանդարտին համապատասխան սանիտարական պայմաններում
- պետք է կատարվեն հավաքի քանակների, պահեստավորման, վաճառքի և այլ անհրաժեշտ բոլոր գրանցումները
- պետք է հավաքել առողջ, չվնասված պտուղները
- պետք է լավ տիրապետել յուրաքանչյուր բուսատեսակի հավաքման տեխնիկային (օր. հյութալի պտղամսով հատապտուղները պետք է հավաքել զգուշորեն, պտղակոթի հետ միասին)
- անտառում և այլ տարածքներում խիստ ուշադրություն պետք է դարձնել և պահպանել հրդեհի անվտանգության կանոնները
- հավաքը իրականացնելու համար հաշվի առնել հավաքի սեզոնային ժամկետները, եղանակային պայմանները, հավաքվող բույսի կամ հատապտղի տեսակը, հավաքի նպատակը և այլն